


## ՌԵՎ ԲՐԵԴՐԸՐԻ (1920-2012)



- Կենսագրական տեղեկություններ
- Ժամանակակիցները՝ Ռեյ Բրեդրըրիի մասին
- «Ժպիտը»
- Լրացուցիչ նյութեր

Քսաներորդ դարի հայտնի ֆանտաստ գրող Ռեյ Դուգլաս Բրեդրըրին, որ հեղինակել է 10 վեպ, 6 վիպակ, շուրջ 400 պատմվածք, նաև գրել է բանաստեղծություններ, հոդվածներ, ակնարկներ ու էսաներ, ունի տասնյակ պիեսներ ու մի շարք սցենարներ, նաև գիտական ֆանտաստիկայի ժանրի դասական է: Նրա գրեթե բոլոր հայտնի ստեղծագործություններում որոշիչ տեղ են գրադեցնում կյանքի բերկրանքը և հոգսը:

### ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռեյ Դուգլաս Բրեդրըրին ծնվել է 1920 թ. օգոստոսի 22-ին ԱՄՆ-ի Իլինոյս նահանգի Ուուկիգան քաղաքում՝ Մարի Էսթեր Մոբերգի և Լեոնարդ Սփոլդինգ Բրեդրըրիի ընտանիքում: Երկրորդ անունը՝ Դուգլաս, նա ստացել է ի պատիվ հայտնի դերասան Դուգլաս Ֆերբենկսի: Մանուկ հասակում Բրեդրըրին շրջապատված է եղել մեծ ընտանիքով: Երբ նա փոքր էր, նրա մորաքույրը հեքիաթներ էր կարդում, որոնք հիմք են հանդիսացել գրողի աշխատանքների համար:

Նա ստեղծագործել է բազմաթիվ ժանրերով՝ գիտաֆանտաստիկական, սարսափ և առեղծվածյախն գեղարվեստական ժանրերում: Նա հայտնի է իր «451 աստիճան ըստ Ֆարենհայթի» (1953), սարսափ-պատմվածքների ժողովածուներով, ինչպես նաև «Մարսյան քրոնիկոնը» (1950) պատմվածքների ժողովածուով:

Բրեդրըրին 20-21-րդ դարերի ամենանշանավոր գրողներից է: Չնայած նրան, որ գրողի գործերը հիմնականում ֆենթրզի ժանրում են, նա իրեն փորձել է նաև այլ ժանրերում: Դրանց օրինակներից են «Խատուտիկի գինին» (1957) և «Սպիտակ կետը» (1992):

Բրեդբրին բազմաթիվ մրցանակների դափնեկիր է, որոնցից է 2007 թ. Պոլիցերի մրցանակը: Բրեդբրին նաև գրել է սցենարներ տարբեր հեռուստահային հաղորդումների համար, որոնցից է «Մորի Դիք» հաղորդումը: Նրա աշխատանքներից շատերը տեղ են գտել տարբեր կոմիքսնեում, հաղորդումներում և ֆիլմերում:

1934 թ., երբ Բրեդբրին 14 տարեկան էր, ընտանիքը վերջնական բնակություն հաստատեց Լու Անջելեսում: Բրեդբրիի հայրը աշխատանք գտավ կաբելային ընկերությունում, որտեղ նա մետաղալարեր էր սարքում:

Բրեդբրին հաճախում էր Լու Անջելեսի ավագ դպրոցը և շատ ակտիվ դրսևորում էր իրեն դրամայի խմբակում: Նա հաճախ գլաչմշկում էր Հոլիվուդով, որպեսզի հանդիպի հայտնի աստղերի: Տաղանդավոր մարդկանցից նա հանդիպել էր Ուեյ Հերիհոուսենին և ռադիոյի աստղ Ջորջ Բըրնսին:

Բրեդբրին առաջին աշխատավարձը ստացել է 14 տարեկանում՝ իր կատակներից մեկը Ջորջ Բըրնսին վաճառելու համար, որը պետք է օգտագործվեր «Բըրնս և Ալլեն» ռադիոյի հաղորդման ժամանակ:

Չնայած նրան, որ Բրեդբրին երազում էր դերասան դառնալու մասին, սկսեց ավելի լուրջ վերաբերվել գրելուն: Բրեդբրին ավարտեց ավագ դպրոցը Լու Անջելեսում, որտեղ նա պոզիայի դասեր էր անցնում Սնոու Հուշի մոտ, որ նկատել էր նրա տաղանդը և խորացրել էր գրելու հանրեալ հետաքրքրությունը: Բայց նա համալսարան չընդունվեց, փոխարենը փողոցներում ամսագրեր էր վաճառում: Իր կրթության վերաբերյալ նա ասել է. «Երբ ես 19 տարեկան էի, ես չէի կարող ընդունվել քոլեջ, որովհետև աղքատ ընտանիքից էի: Մենք փող չունեինք, ուստի ես գնում էի գրադարաններ: Շաբաթվա մեջ երեք օր ես կարդում էի գրքեր: Այսպես, 27-ում ես համալսարանի փոխարեն ավարտեցի գրադարանը»:

Բրեդբրին իր ամբողջ կյանքում մնացել է եռանդուն գրող, ով թողել է գրական հսկայական ժառանգություն: Նա գրել է 27 նովելներ և ավելի քան 500 կարճ պատմվածքներ: Իր գործերից 8 միլիոն կրկնօրինակ, որոնք թարգմանվել են 36 լեզուներով, վաճառվել են ամբողջ աշխարհում: Բրեդբրին հինգ տարի եղել է Լու Անջելեսի թատրոնի տնօրեն:

Բրեդբրին ամուսնացած է եղել Մարգերիտ Բրեդբրիի հետ: Նրանք ունեին չորս երեխա՝ Սյուզան, Ռամոնա, Բետտինա և Ալեքսանդրա: Բրեդբրին երբեք չի ստացել վարորդական իրավունք և հույսը դնում էր իր իր հեծանիվի վրա:

Բրեդբրին մահացել է 2012 թ. հունիսի 5-ին Լու Անջելեսում երկարատև հիվանդությունից հետո: Նա ցանկությամբ իր սեփական գրադարանը փոխանցվել է Ուոկեգանի գրադարանին, որտեղ նա շատ ժամանակ է անցկացրել:

## Ժամանակակիցները Ուեյ Բրեդբրիի մասին



Ես բացահայտեցի Էդգար Պոյին՝ կարդալով Բրեդբրին: Ես ինը տարեկան էի, երբ առաջին անգամ կարդացի Մարսյան քրոնիկոնը, մինչ այդ ես չէի լսել Պոյի մասին, բայց Բրեդբրին հիանում էր նրանով: Ես նույնպես սիրոցի Պոյին:

**Նիլ Գեյման**



Դրայգերը մեծագույն գրող էր, և Բրեդբրին կարծես Դրայգեր է ֆենթզիի ժանրում, թեպետ նրա ոչն ուրիշ է, իսկ հպումը հեշտ է: Ամեն դեպքում, նրանք շատ նման են:

## Սթիվեն Քինգ

### Ամփոփիչ հարցեր

1. Որտե՞ղ և ե՞րբ է ծնվել Բրեդբրին և ի՞նչ կրթություն է ստացել:
2. Ի՞նչն է ոգևորել Բրեդբրիին գրող դառնալու:
3. Ի՞նչ ժանրերով է ստեղծագործել Բրեդբրին:
4. Որո՞նք են նրա հայտնի ժողովածուներն ու ստեղծագործությունները:
5. Ի՞նչ հակումներ ու երազանքներ ուներ պատանի գրողը: Իրականացա՞ն դրանք: Ինչո՞ւ:
6. Կազմի՞ր սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության ուշագրավ փաստերը:

### Առաջադրանքներ և վարժություններ

1. Ներկայացրո՛ւ Վիյամ Սարոյանի կենսագրության հիմնական փաստերը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:
2. Երկայուն աղյուսակով ներկայացրո՛ւ Բրեդբրիի ապրած ժամանակաշրջանը և ստեղծագործության ընդհանուր պատկերը:

Բրեդբրիի ապրած ժամանակաշրջանը	Ստեղծագործության ընդհանուր պատկերն ըստ ժամանակագրության

3. Ներկայացրո՛ւ հեղինակի ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունները:
4. Ներկայացրո՛ւ Բրեդբրիի կյանքից հետաքրքիր դրվագներ, ապրած ժամանակաշրջանը, միջավայրը:

## ԺՊԻՏԸ

### 1

Այս առավոտյան ժամը հինգին, երբ եղյամապատ գյուղերում դեռ կանչում էին աքաղաղները, և ոչ մի տեղ կրակ չէր նշմարվում, քաղաքի հրապարակում արդեն հավաքվել էր մի հսկա բազմություն: Ժամը յոթի մոտերքին շենքերի ավերակների վրա կախված մառախուղի պատառիկները հավեցին վաղորդյան գունատ լուսի մեջ: Երկու կամ երեք հոգանոց փոքրիկ խմբերով մարդիկ լցրել էին ճանապարհները, այսօր շուկայի օրն էր և տոնակատարության օրը:

Տղան կանգնած էր գրուցով տարված տղամարդկանց ետևում: Արանց ձայները բարձր էին ինչում, և, թվում էր, թե սառն ու թափանցիկ օդի մեջ բառերը տարածվում են հեռո՛ւ հեռուները: Տղան դոփում էր, փշում իր կարմրած ու ճաքճաքած ձեռքերին և նայում կեղտոտ քրջեր հագած մարդկանց հսկա բազմությանը, որ հերթ էր կանգնած:

- Է՛յ, պստի՛կ, այսքան վաղ ի՞նչ գործ ունես այստեղ,- հարցրեց նրա ետևում կանգնած տղամարդը:

- Ուզում եմ տեղ բռնել հերթում,- պատասխանեց տղան:

- Ավելի լավ կլիներ հեռանայիր այստեղից և տեղդ զիջեիր այնպիսի մի մարդու, որը կիասկանար կատարվելիքը:

- Տղայի խաթրին մի՛ կպչիր,- շրջվեց գրուցողներից մեկը:

- Ես կատակեցի,- և մարդը շոյեց տղայի գլուխը:

Տղան բարկացած թափահարեց գլուխը:

- Ուղարկի զարմանում եմ, որ երեխաները այսքան շուտ վեր են կենում իրենց անկողիններից:

- Ստիպված եմ քեզ ասելու, որ այս պստիկին արվեստը հետաքրքրում է,- պատասխանեց տղայի պաշտպանը, որի անունը Գրիգորի էր:- Ի դեպ, անունդ ի՞նչ է, տղա՛:

- Թո՛մ:

- Ի՞նչ եմ ասում, Թո՛մ, կկարողանա՞ս թքել ինչպես հարկն է, առանց վրիպելու, իը՞:

- Այն էլ ո՞նց:

Հերթի կանգնածները ծիծառեցին:

Մի քանի քայլ այն կողմ հալից ընկած մի ծերունի ինչ-որ խմիչք էր վաճառում ճաքճաք գավաթներով: Քիչ հեռվում խարոյել էին վառել, և կրակի վրա՝ թիթեղյա ժանգոտած ամանում, քլթքլթում էր կեղտագոյն արգանակը: Այդ արգանակը բնավ էլ նման չէր սուրճի: Արգանակը պատրաստում էին քաղաքամերձ մարգագետիններից հավաքած հատապտուղներից և վաճառում գավաթը մի պեննիով: Արգանակը հրաշալի տաքացնում էր մարդու սառած մարմինը, բայց դա էլ ոչ բոլորի գրապանին էր մատչելի:

Թոմը նայեց առաջ: Հերթն սկսվում էր քարե պատի ավերակների մոտից:

- Լսել եմ, որ կինը ժպտում է,- ասաց նա:

- Ճիշտ է,- պատասխանեց Գրիգորին:

- Հսել եմ, որ կինը ներկերով է նկարված կտավի վրա:
  - Ճիշտ է: Միայն թե իմ կարծիքով դա խկականը չէ: Ասում են՝ խկականը շատ ու շատ վաղուց նկարված է եղել փայտի վրա:
  - Ես լսել եմ, որ իբր չորս հարյուր տարի առաջ:
  - Գուցե և ավելի: Ո՞վ գիտե, թե իիմա որ թվականն է:
  - 2061:
  - Ասում են, տղա՛ս, որ 2061, իսկ ասել կարող են ամեն բան: Փչո՞ց է: Գուցե իիմա 3000 թվականն է, գուցե՝ 5000, որտեղի՞ց իմանամ: Այնպիսի ապուր են եփել, որ մեզ ժառանգություն են մնացել միայն բեկորներ ու ավերակներ:
- Նրանք դանդաղ առաջ շարժվեցին սալահատակի սառը քարերի վրայով:
- Դեռ երկա՞ր ենք կանգնելու,- անհամարձակ հարցրեց Թոմը:
  - Չե՞, իիմա արդեն՝ չէ: Մի քանի րոպե միայն: Նրա շուրջը չորս պղնձե սյուն են խփել, թավշյա մի թոկ էլ ծգել են, որպեսզի ժողովուրդը շատ չմոտենա նկարին: Այնպես որ, տղա՛ս, ականջիդ օ՛ղ արա, նկարը քարկոծելն արգելված է:
  - Այո՞ւ, սը՞ր:
- Արևն այնքան բարձրացավ, որ շոգը մարդկանց ստիպեց հանել իրենց կեղտուտ վերարկուներն ու ճենճուտ գլխարկները:
- Իսկ ինչո՞ւ ենք հերթ կանգնել,- հարցրեց Թոմը:- Միայն նրա վրա թքելո՞ւ համար:
- Գրիգորին հայացքը հեռացրեց տղայից ու նայեց երկնքին:
- Է՛հ, Թո՞մ, մեր կանգնելն արժե,- և նա սովորություն դարձած շարժումով ձեռքը տարավ աստված գիտե թե երբ պատոված վերարկուի գրպանը՝ սիգարեթ հանելու, մի բան, որը վաղուց վերացել և հուշ էր դարձել:
- Թոմը հաճախ էր այդպիսի շարժումներ տեսել:
- Տեսն՞ամ ես, Թո՞մ, ինչ խաղ են խաղացել մեր գլխին: Բանը ոչ թե անցյալից մնացած ժառանգության նկատմամբ ունեցած ատելությունն է: Կարո՞ղ ես ինձ բացատրել, թե ինչպես եղավ, որ գլորվեցինք այս վիհը, որտեղ քաղաքների փոխարեն միայն ավերակներ են, ճանապարհները՝ խառնաշփոթ դարուփուեր, իսկ դաշտերը մինչև իիմա էլ գիշերները լուսարձակվում են ռադիոակտիվությունից: Ասելս այն է, որ ժամանակին շատ զզվելի ապուր են եփել մարդիկ:
  - Այո՞ւ, ճիշտ է, սը՞ր:
- Հենց դրա համար էլ, Թո՞մ, ասում ենք այն ամենը, ինչ մեզ հասցրել է այս փորձանքին: Մարդու բնույթն է այդպես: Գուցե սխալ բան եմ ասում, բայց մարդու բնույթը այդպես է:
- Կարծեմ մենք ատում ենք ամեն բան, առանց բացառության,- ասաց Թոմը:
  - Ճիշտ է: Ասում ենք այն ամբողջ գարշելի ելուզակախումբը, որ ժամանակին կառավարել է աշխարհը: Սրանց պատճառով է, որ իիմա քաղցած ենք, դողում ենք ցրտից և քարանձավներում ենք պատսպարվել: Էլ չեմ ասում, որ ո՞չ խմում ենք, ո՞չ ծխում և ոչի՞նչ, ոչի՞նչ չենք անում՝

բացառությամբ տոնակատարություններին մասնակցելուց: Այո՛, Թո՛մ, տոնակատարություններն են միայն մեզ մնացել:

Եվ Թոմը հիշեց, թե ինքը ինչպիսի տոնակատարությունների է մասնակցել անցած տարիներին: Մի անգամ հրապարակում նրանք գրքեր էին պատառոտում և այրում: Այն ժամանակ բոլորը հարբեցին և զվարճացան մինչև հալից ընկնելը: Իսկ Գիտության տոնի օրը՝ սրանից մեկ ամիս առաջ, քարշ տալով նրանք հրապարակ բերեցին վերջին ավտոմեքենան: Մարդիկ վիճակ գցեցին, և նրանց, ում բախտը բերեց, թույլ տրվեց ևս մեկ անգամ ծանր մոլորով հարվածել ավտոմեքենային:

- Ասում ես՝ հիշո՞ւմ եմ այդ տոնակատարությունը, Թո՛մ: Իհարկե, հիշում եմ. այն էլ ինչպե՞ս: Այսր ինձ բախտ վիճակվեց ջարդուփշուր անել դիմապակին: Այո՛, այո՛, դիմապակին: Ուզում ես հավատա, ուզում ես՝ ոչ: Է՛հ, ինչպիսի՝ զրնգոց դուրս եկավ, հա՛. «զը-ըը-նգ»:

Եվ Թոմին թվաց, թե պատմողի ականջներում մինչև հիմա ձայն է տալիս կոտրված ապակու զրնգոցը:

- Իսկ Բիլ Հենդերսոնին հանձնարարեցին շարժիչը տեղահան անել: Նա տաքացած գործի կպավ և տեղնուտեղը հաշիվը մաքրեց շարժիչի հետ: «Թըխկ-թրա՛խկ», ու վերջ: Շատ ավելի հաճելի էր,- հիշեց Գրիգորին,- երբ ավերում էինք այն ֆաբրիկան, որն ինքնաթիռներ էր արտադրել: Գործ եմ ասել, հա՛. հիմա էլ հիշելուց մարդու հոգին փառավորվում է,- շարունակեց նա:- Իսկ հետո հարձակվեցինք տոլարանի և գինվորական պահեստի վրա: Մի վայրկյանում հօդս ցնդեցրինք: Հիմա հասկացա՞՞ր, տղա՛:

Թոմը փորդ-ինչ մտածեց:

- Կարծես թե հասկացա,- ասաց նա:

Արևն արդեն կախվել էր գենիթում: Քաղաքի ավերակներից տարածվեց գարշահոտությունը: Շինություններից մնացած բեկորների վրա սկսեցին ինչ-որ արարածներ սողալ:

- Նա այլս չի՝ վերադառնա, հը՞, մի՛ստր:

- Ո՞վ: Քաղաքակրթությո՞ւնը... Ո՞ւմ է պետք: Համենայն դեպս, ես դրա կարիքը չեմ զգում:

- Այդ քաղաքակրթության մեջ ինչ-որ մի լավ բան կար, որն իմ սրտովն է,- նկատեց հետևում կանգնած մարդը:- Մի բան կար, որն այնքան էլ վատ չի եղել:

- Այդ մասին բավական է շատախոսեք,- ընդհատեց նրան Գրիգորին:- Ինչ որ եղել է՝ եղել է ու անցել:

- Համենայն դեպս,- ասաց հետևում կանգնած մարդը,- կզա ժամանակ և ուսերին գլուխ ունեցող մի երիտասարդ կիայտնվի ու կզանա վերանորոգել ջարդուփշուր եղած քաղաքակրթությունը: Սիրտ ու հոգի ունեցող մարդ կլինի նա, հիշեցեք խոսք:

- Ո՛չ, չի հայտնվի,-ասաց Գրիգորին:

- Իսկ ես ասում եմ, որ կիայտնվի: Գեղեցիկը սիրող մի մարդ: Եվ գուցե նա մեզ համար հետ կբերի կորած քաղաքակրթությունը: Իհարկե, ոչ այն ամենը, ինչ եղել է անցյալում, բայց գոնե դրա մի մասը, այն մասը, որի շնորհիվ հնարավոր լինի խաղաղ ապրել:

-Այ, տեսնո՞ւմ ես: Եվ մինչև դու գլխի կընկնես, թե ինչ կատարվեց, կսկսվի մի նոր պատերազմ:

- Իսկ ես հավատում եմ, որ այս անգամ ամեն բան ուրիշ ընթացք կունենա...

## Ամփոփիչ հարցեր

1. Ո՞վ է պատմվածքի գլխավոր հերոսը: Ի՞նչն էր նրան առավոտ կանուխ բերել շուկա:
2. Ի՞նչ նշանակալից իրադարձություն էր այդ օրը գյուղում, և մարդիկ ո՞ւ էին հավաքվել: Ի՞նչո՞ւ:
3. Ի՞նչն էր միավորել հավաքվածներին: Ի՞նչո՞ւ:
4. Ի՞նչի՞ց էր դժգոհում Գրիգորին: Քաղաքական ինչպիսի՞ իրավիճակ էր երկրում:

## Առաջադրանքներ և վարժություններ

1. Ներկայացրո՛ւ ժամանակաշրջանը և նմատնանշի՛ր՝ որտեղ են կատարվում պատմվածքի գործողությունները:
2. Վերարտադրի՛ր «Ժպիտը» պատմվածքի հատված բովանդակությունը:
3. Թվարկի՛ր պատմվածքի այս հատվածի կերպարները՝ ներկայացնելով նրանց փոխհարաբերությունները:
4. Բնութագրի՛ր կերպարներին՝ հատվածից դուրս բերելով նրանց բնութագրող տողեր:
5. Պատմի՛ր սեփական կյանքից հետաքրքիր դեպքեր (գրավոր կամ բանավոր), համեմատի՛ր բնագրի հետ:
6. Գնահատի՛ր հերոսների վարքագիծը և արտահայտի՛ր քո վերաբերմունքը նրանց արարքների վերաբերյալ:
7. Նկարագրի՛ր պատմվածքի հերոսներին քո բառերով:

Կերպար	Ֆիզիկական նկարագրություն	Նկարագրի՛ր կերպարի երկու վարքագիծ	Հատվածից ելնելով՝ բացատրի՛ր, թե ինչու նա այդպես վարվեց

1. Կարդա՛ այս հատվածը և ներկայացրո՛ւ սեփական դիրքորոշումդ: Գտի՛ր ընդհանրություններ և տարրերություննե՛ր.

«Ճիշտ է: Ասում ենք այն ամբողջ գարշելի ելուզակախումբը, որ ժամանակին կառավարել է աշխարհը: Սրանց պատճառով է, որ հիմա քաղցած ենք, դողում ենք ցրտից և քարանձավներում ենք պատսպարվել: Էլ չեմ ասում, որ ո՛չ խմում ենք, ո՛չ ծխում, և ոչի՞նչ, ոչի՞նչ չենք անում՝ բացառությամբ տոնակատարություններին մասնակցելուց: Այո՛, Թո՞մ, տոնակատարություններն են միայն մեզ մնացել»:

Համեմատի՛ր մեր երկրում կատարված իրադարձությունների հետ:

2. Մեկնաբանի՛ր հետևյալ միտքը: Բնութագրի՛ր հերոսի հոգեբանական շարժառիթը: Ո՞րն էր լավատեսությունը:

«Համենայն դեպս,- ասաց հետևում կանգնած մարդը,- կզա ժամանակ և ուսերին գլուխ ունեցող մի երիտասարդ կիայտնվի ու կջանա վերանորոգել ջարդություր եղած քաղաքակրթությունը: Սիրտ ու հոգի ունեցող մարդ կլինի նա, հիշեցեք խոսք»:

10. Դո՛ւրս գրիր տվյալ հատվածում կիրառված պատկերավորման միջոցները, նշի՛ր դրանց ոճական նշանակությունը:

## 2

Վերջապես հերթը հասավ մինչև գլխավոր հրապարակը: Այստեղից մարդիկ տեսան, թե ինչպես քաղաք մտավ թղթե փաթեթը ձեռքին մի հեծյալ: Հրապարակի կենտրոնը թուկապատնեշով էր շրջափակված: Թոմը, Գրիգորին և մյուսները, բերաններում թուք հավաքելով, դանդաղ շարժվեցին դեպի սյուները: Չոված աչքերով նրանք նայում էին կտավին և պատրաստ էին ամեն անակնկալի: Թոմը զգաց, թե ինչպես արագ ու տագնապով է զարկում սիրտը, թե ինչպես է շիկացած հողն այրում իր մերկ կրունկները:

- Դե՛, Թո՞մ, սկսե՞՞նք:

Պատնեշված հարթակի անկյուններում կանգնել էին չորս ոստիկան: Նրանցից յուրաքանչյուրի թևին մի դեղին կապ կար՝ մարդկանց վրա իշխանություն ունենալու խորհրդանիշը: Ոստիկանները հետևում էին ամբոխին. հանկարծ մեկնումեկի խելքին չփչի քարկոծել նկարը:

- Նրանք կանգնած են, որպեսզի բոլորը կարողանան տեսնել կտավը: Հանկարծ նեղացող չլինի: Հասկացա՞ր,- տղային ասաց Գրիգորին: Իսկ հիմա գնանք առաջ:

Թոմը կանգնեց նկարի առջև ու երկար, ուշադիր նայում էր նրան:

- Թքի՛ր, Թոմ:

Թոմի բերանը չորացել էր:

- Դե՛, քեզ եմ ասում:

- Բայց նա ախր...-դանդաղ ասաց Թոմը, - ախր նա շատ գեղեցիկ է:

- Է՛հ, Թո՞մ, թո՞յլ տուր ես քո փոխարեն Էլ թքեմ:

Գրիգորին ուղցրեց թշերը, և թուքը արկի պես փայլատակեց արևի ճառագայթների տակ:

Կտավի վրա նկարած կինը ժպտում էր Թոմին՝ իր խորհրդավոր, անխոռվ ժպիտով, իսկ Թոմը կանգնել, նայում էր նրան: Տղայի սիրտն սկսեց ավելի արագ բարախել, իսկ ականջներում ինչեց մի մեղեղի:

- Նա գեղեցիկ է,- կրկնեց Թոմը:

- Դե շո՛ւտ արա, թե չէ ոստիկանությունը...

- Զգա՞ստ:

Ամբոխը խաղաղվեց: Մարդիկ, որ քիչ առաջ դժգոհում էին Թոմից, թե նա ինչու է այդպես քարացել տեղում, հիմա հնազանդորեն շրջվեցին հեծյալի կողմը:

- Սը՛ր, ինչպե՞ս է նրա անունը,- կիսաձայն հարցրեց Թոմը Գրիգորիին:

- Նկարի՞՝ Կարծեմ Մոննա Լիզա, Թո՛մ: Այո՛, Մոննա Լիզա:

- Կարդում եմ հայտարարությունը,- ասաց հեծյալը:- «Իշխանությունների որոշման համաձայն, այսօր՝ ճիշտ կեսօրին, դիմանկարը կտրվի ազգարնակչությանը, որպեսզի բոլոր տեղացիները կարողանան մասնակցություն ունենալ այն պատառութելու գործին»:

Մինչև Թոմը կաթափվեր, ամբոխը առաջ նետվեց՝ իր հետ քարշ տալով տղային: Մարդիկ ճշում, աղաղակում և հրմշտում էին իրար: Ոստիկանությունը խրվեց ամբոխի մեջ: Բարձրացավ կատաղի, բազմաձայն մի վայնասուն: Ձեռքերը ագահ անգղների պես ձգվեցին դեպի նկարը: Լսվեց պատովող կտավի չոր ճթճթոցը: Թուն զգաց, թե ինչպես իրեն մղեցին ուղիղ դեպի շրջանակը: Ընդօրինակելով մյուսներին՝ նա ևս մեքենաբար մատների տակ առավ կտավի մի մասն ու թափով ձգեց: Լսվեց ճայթյուն, հետո տղան ընկավ գետնին և ինչ-որ մեկի ոտքերի տակից գլորվեց դեպի սահմանազատված հարթակի եզրը:

Ոտքի կանգնեց: Պատառութված հազուատներով և արյունլվիկ Թոմը նայում էր, թե ինչպես են տղամարդիկ ջախջախում շրջանակը, ինչպես են պառավները պատառ-պատառ անում կտավը և ապա ծամում իրենց անատամ բերաններով:

Թոմը միայնակ էր այդ դիվահար ամբոխի մեջ: Կրծքին սեղմած՝ նա բռնել էր կտավի պատառիկը:

- Ե՛յ, Թո՛մ, ո՞ւր կորար,- բղավեց Գրիգորին:

Բայց Թոմը չպատասխանեց: Շրջվեց ու սկսեց փախչել: Դուրս եկավ ոումբերի ձագարներով ծածկված մեծ ճանապարհի վրա, թեքվեց դեպի դաշտը, անցավ սակավաջուր գետակը և շարունակեց վազել՝ առանց ետ նայելու, վազել՝ ցավելու չափ սեղմած բռունցքը վերարկուի տակ թաքցրած:

Արդեն իրիկնանում էր, երբ նա հասավ գյուղակին. կտրեց-անցավ գյուղակը և ժամը իննին մոտ, վերջապես, հասավ կիսաքանդ ֆերմային: Առաջներում որպես ցախատուն ծառայող և հիմա կանգուն մնացած միակ շինության ներսից խոմփոց էր լսվում: Այնտեղ քնած էին Թոմի հարազատները՝ մայրը, հայրը և եղբայրը: Թոմը ճարպկորեն սողոսկեց նեղլիկ դռան միջով և, ծանր հևալով, պառկեց եղբոր կողքին:

- Դո՞ւ ես, Թո՛մ,- խավարում լսվեց մոր ձայնը:

- Ես եմ:

- Ո՞ւր էիր կորել,- փնթփնթաց հայրը:- Սպասի՛ր, ես քեզ հետ առավոտյան կխոսեմ:

Ինչ-որ մեկը մշտեց (արմունկով իրել) Թոմին: Եղբայրն էր, որին այսօր ստիպել էին Թոմի փոխարեն աշխատել փոքրիկ հողամասում:

- Չկովե՛ք,- բարկացավ մայրը:

Թոմը պառկել և ջանում էր ծպտուն չիանել. նա ամբողջ ուժով կրծքին էր սեղմել ձեռքը: Եվ այդպես նա մոտ կես ժամ պառկեց, պառկեց անշարժ, աչքերը փակ:

Հետո նա զգաց, թե ինչպես է դեմքի վրայով սահում լոյսի ճառագայթը: Սառը, գունատ լոյսի ճառագայթը: Լուսինն էր սողում երկնակամարով, և նրա նիհարիկ ճառագայթը տանիքի ճեղքից հասել էր Թոմին: Ականջ դնելով քնածների շնչառությանը՝ Թոմն զգուշորեն դուրս հանեց ձեռքը: Նա դեռ երկմտանքի մեջ էր, հետո, շունչը պահած, բացեց բռունցը և խնամքով հարթեց ներկված կտավի պատառիկը:

Թոմի ափի մեջ մի ժպիտ կար:

Թոմը նայում էր գիշերային երկնքից հոսող գունատ լոյսով լուսավորված ժպիտին ու մի բանի մասին էր մտածում միայն. «Ժպիտ: Ի՞նչ գեղեցիկ ժպիտ է»: Հետո, երբ կտավի պատառիկը խնամքով ծալել ու թաքցրել էր, Թոմը փակեց աչքերը, և խավարում նրա առջև կրկին հարյավ ժպիտը:

Հետո Թոմը քնեց: Լուսինը շարունակում էր սողալ գիշերային սառը երկնակամարով: Եվ առավոտյան լուսինը ցած սահեց երկնակամարից: Իսկ Թոմը դեռ քնած էր: Եվ Թոմի հետ էր քնքուշ ու բարի ժպիտը:

## Ամփոփիչ հարցեր

1. Ինչո՞ւ էր հրապարակի կենտրոնը թոկապատնեշով շրջափակված:
2. Ի՞նչ որոշում էին կայացրել իշխանությունները նկարի վերաբերյալ: Ինչո՞ւ:
3. Ո՞ւմ նկարն էր ցուցադրվում հրապարակում: Ի՞նչ վերաբերմունք էին ուզում արտահայտել մարդիկ նկարի կնոջ հանդեպ: Ինչո՞ւ:
4. Ինչ անակնկալ էր ուզում մատուցել ժողովուրդը նկարի ցուցադրման ժամանակ: Ինչո՞ւ:
5. Գրիգորին ինչո՞ւ էր ստիպում Թոմին, որ վաս արարք կատարեր:
6. Ինչպե՞ս կգնահատես Թոմի և մյուսների արարքը: Մեղադրի՞ր կամ արդարացրո՞ւ նրան:
7. Ի՞նչ ավարտ կհորինեիր պատմվածքի համար: Ինչո՞ւ:

## Առաջադրանքներ և վարժություններ

1. Ստեղծագործաբա՞ր վերաշարադրիր հատվածի բովանդակությունը՝ կիրառելով նոր սովորած բառերը և պատկերավոր արտահայտությունները:
2. Ներկայացրո՞ւ պատմվածքի գլխավոր միտքը/գաղափարը:
3. Բնութագրի՞ր գործող անձանց՝ մեկնաբանելով նրանց արարքների հոգեբանական շարժառիթները:
4. Պատմի՞ր քո մանկության տարիներից մի հետաքրքիր դեպք և համեմատի՞ր պատմվածքի հերոսի հետ:
5. Պարզաբանի՞ր պատմվածքում գործող անձանց վարքի դրդապատճառները, կապի՞ր սեփական փորձիդ հետ («Ինչպե՞ս կվարվեի ես ...»):
6. Դուրս գրի՞ր պատմվածքի գլխավոր գաղափարն արտահայտող բանալի բառերն ու նախադասությունները:
7. Որոշի՞ր պատմվածքի գործող անձանց խոսքի առանձնահատկությունները, հակադրի՞ր տարբեր անձանց արարքները, նրանց վերաբերմունքը շրջապատի նկատմամբ:

8. Ներկայացրո՞ւ վերնագրի և պատմվածքի իմաստային փոխադարձ կապի մասին: Անվանի՞ր վերնագրի այլընտրանքային տարբերակներ՝ պատճառաբանելով:

Եթե փորձենք մեկ նախադասությամբ ասել, թե ինչի մասին է «Ժպիտը» պատմվածքը, թերևս կնշենք՝ այն մասին, որ գեղեցիկը (այս դեպքում՝ նույն է թե բարին) երբեք չի մեռնում: Պատմվածքի հերոսների երկխոսությունից հասկանում ենք, որ նկարագրվում է ինչ-որ հեռավոր ապագա, և որ դրանից շատ տարիներ, գուցե դարեր առաջ մարդկային քաղաքակրթությունը, գոռողանալով ու անզգայանալով, ինչ-որ մեծ չարիք է գործել՝ աշխարհը մոխիրների վերածելով: Սակայն մարդակյին սերունդը, այնուամենայնիվ, իսպառ չի վերացել: Բայց այս նոր մարդիկ ասես խելագարվել են ավերի մեջ, անգործության պայմաններում: Իրենց տաղտուկը փարատելու համար նրանք ամեն անգամ ինչ-որ անհեթեթ «արարողություն» են կազմակերպում, որոնք տոն են անվանում: Ահա այդպիսի մի գործողություն էլ անցյալից մնացած մի գեղեցիկ կտավի՝ Մոննա Լիզայի պատկերի վրա թքելն է, այն պատառուտելը: Բայց ի՞նչ է կատարվում այս անգամ: Ամբոխից առանձնանում է մի պատանի, որի սիրտը հոգրում է պատկերված կնոջ գեղեցկությունը, ժպիտը, որ նրան գորովայից է թվում: Տղայի սրտում արթնանում է այն, ինչ այս նոր սերունդը վաղուց կորցրել էր՝ հոյզը, մարդկայնությունը:

Այո՞ւ, գեղեցիկը երբեք չի մեռնում, գեղեցիկը կարող է հառնել մոխիրների, ավերի միջից անգամ և ջերմացնելով թեկուզ մի պատանու սիրտը՝ հոգիների բժշկության ու նոր կյանքի առաջին՝ գողտրիկ ավետիսը դառնալ:

## Հետաքրքիր փաստեր

Ա. Բրեդբրոին չափազանց աղքատ էր, սակայն ուներ հարուստ երևակայություն, ու հենց դա էլ նրան օգնեց գրող դառնալու ճանապարհին: Էդգար Բերոուզի «Մարսի հզոր ռազմիկը» գիրքը նրա սիրելին դարձավ, բայց չկարողացավ գնել դրա երկրորդ մասը՝ գումար չունենալու պատճառով: Հենց դա էլ Բրեդբրոին ստիպեց գրել գոքի իր պատկերացրած շարունակությունը:

Բ. Դպրոցի ավարտականին նա ստիպված էր գնալ հանգուցյալ պապի կարկատած կոստյումով: Իսկ կարկատել էին փամփուշտների կրակած տեղերը, երբ ավազակները հարձակվել էին ու սպանել պապին:

Գ. Միակ հարազատ մարդը, ում կերպարը գրքերում չի օգտագործել, գրողի հայրն էր: Հոր մահվանից տարիներ անց միայն Բրեդբրոին նրան կնվիրի իր պատմվածքների ժողովածուն՝ «Բուժիչ դեղ մելամաղձության դեմ»:

Դ. Դժվար կլինի հավատալ, բայց Ռեյ Բրեդբրոի ամենահայտնի գիրքը, որը նրան անմիջապես համաշխարհային փառք ապահովեց՝ «451 աստիճան՝ ըստ Ֆարենհայտի»-ն, առաջին անգամ տպագրվել է հանրահայտ «Playboy» ամսագրում 1953 թվականին: